«Պետական տուրքի մասին» օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ օրենքով սահմանված բազային տուրքի նկատմամբ:

«Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 9.4 և 9.5 կետերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1) առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացվող, այդ թվում՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի կողմից ներկայացվող հայցադիմումների համար՝

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ բազային տուրքի 50-ապատիկի չափով, իսկ գնման պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված վեճերով՝ պետական տուրքը գանձվում է բազային տուրքի 30-ապատիկի չափով:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի մեջ ընդգրկել է նաև պետական տուրքի գումարը, որը հաշվարկվում է օրենքով սահմանված կարգով: Նման հաշվարկի հիման վրա է որոշվում օրենքով սահմանված և պարտադիր վճարման ենթակա պետական տուրքի չափը:

Տվյալ պարագայում Հայցվորի կողմից նախապես վճարվել է 80,000 ՀՀ դրամի չափով պետական տուրք, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ ելնելով բավարարված պահանջների համամասնության կարգով պետական տուրքի բռնագանձման սկզբունքից:

-

(IV) Եզրափակիչ մաս

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական հիմքերը և հիմնավորումները, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 179-րդ, 188-րդ 189-րդ, 191-րդ, 192-րդ և 27.2-րդ գլխով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի և «Շին նախագիծ» ՍՊԸ-ի միջև կնքված աշխատանքների կատարման թիվ ԵՔ-ԳՀԽՄՇՁԲ-26/1 գնման պայմանագրի միակողմանի լուծումը անվավեր ճանաչելու և 07.05.2026թ. Երևանի քաղաքապետ Տ.Ավինյանի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 2288–Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

4. Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման օրվանից մեկամյա ժամկետում:

Դատավոր՝ **Մալվինա Հարությունյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IEF8-76DC-47C7-9766 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am